ՀՀ կառավարության որոշմամբ խտրական մոտեցում է ցուցաբերվում ՀՀ տարբեր էթնիկ խմբերի նկատմամբ:

2015 թ. փետրվարի 19ի ՀՀ կառավարության նիստի քննարկման է դրվել «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին ՀՀ կառավարության նախագիծը[1], որով նախատեսվում է պետական բյուջեի համապատասխան տողով նախատեսված 20 մլն դրամ հատկացումը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով բաշխել ՀՀ ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին՝ համաձայն որոշման հավելվածի: Որոշման հավելվածով իր հերթին ներկայացված են ՀՀ Նախագահի օգնականին կից գործող ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի անդամ հանդիսացող 11 համայնքները, որոնց միջև հավասարապես բաշխվել է հատկացվելիք գումարը՝ 9 մլ. դրամը: 10 մլ. ՀՀ դրամը, իր հերթին, Խորհրդի որոշմամբ տրամադրվել է «Հարմոնիա» ՀԿ-ին՝ Խորհրդի որոշմամբ հաստատվող ազգային փոքրամասնությունների տարբեր հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ Խորհրդի անդամ չհանդիսացողների) առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման համար:

Նշված որոշման ընդունումը, ըստ նախագծի հիմնավորման բխում է ՀՀ կառավարության «ՀՀ 2015թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, ՀՀ 2015թ. պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշման պահանջներից: Վերը նշված որոշման 28-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարություն պետք է ներկայացվել առաջարկություններ ՀՀ 2015 թ. պետական բյուջեով ազգային փոքրամասնություններին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով նախատեսված հատկացումների՝ ըստ առանձին ստացողների բաշխման վերաբերյալ:

Կառավարության կողմից ազգային փոքրամասնություններին ֆինանսական աջակցության ցուցաբերումը կարելի է գնահատել որպես դրական քայլ, ուղղված ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներուժի զարգացմանը, ինքնության պահպանմանը, իրենց վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Ինչը իր հերթին նաև հանդիսանում է այս խմբերի հանդեպ կառուցողական գործողություն, ուղղված համայնքի և համայնքի ներկայացուցիչների հանդեպ խտրականության վերացմանը:

Միևնույն ժամանակ այս որոշումը պարունակում է մի շարք անորոշ, և նույնիսկ խտրական դրույթներ:

Այսպես, պարզ չէ, թե ինչպես է որոշվել այս գումարները բաշխել միայն նշված Խորհրդի անդամ հանդիսացող 11 կազմակերպությունների միջև և ինչ կարգով պետք է տրամադրվի ՀԿ-ներին «Հարմոնիա» ՀԿ-ին տրամադրված լրացուցիչ 10 մլն. դրամը:

Բացի այդ պարզ չէ, թե ինչպես է ընտրվել նշված կազմակերպությունների միջև գումարների հավասար բաշման սկզբունքը, այն դեպքում երբ նշված համայնքների

[1] Տե՛ս Հավելված 1

անդամների թիվը ՀՀ-ում խիստ տարբեր է: Այսպես, ՀՀ-ում եզդիական համայնքի անդամների թիվը կազմում է 35 308 հազար անձ, իսկ հունական և վրացական համայնքների անդամներ թիվը՝ 900 և 617 անդամ, համապատասխանաբար, սակայն նրանց տրամադրվում է միևնույն չափի գումար[2]: Նման մոտեցման արդյունքում այս համայնքների կողմից նշված միջոցներով իրականացվող միջոցառումների ազդեցությունը կարող է խիստ անհամաչափ լինել:

ՀՀ կառավարության կողմից տարբեր համայնքների հանդեպ ֆորմալ (ձևական) հավասար մոտեցում ցուցաբերելու արդյունքում, խախտվում է իրական բովանդակային հավասարության սկզբունքը: Ինչի արդյունքում մի համայնք՝ մյուս համայնքի համեմատ դրվում է առավել անբարենպաստ վիճակում: Նման մոտեցման որևէ իրավաչափ հիմնավորում ՀՀ կառավարության որոշման նախագծի Տեղեկանք-հիմնավորմամբ[3] փաստաթղթում չի ներկայացվել: ՀՀ կառավարության որոշման նախագիծը այսպիսով խտրական կարգավորումներ է պարունակում, տարբեր քանակի անդամներ ունեցող համայնքներին միևնույն չափի ֆինանսական աջակցություն ցուցաբերելով:

[2] Տե՛ս Հավելված 3
[3] Տե՛ս Հավելված2

Հավելված1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

____ փետրվարի 2015 թվական N _____ - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ԱՋԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման 28-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 04 խմբի 02 դասի «01. Աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին» ծրագրով (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով) նախատեսված 20,0 մլն դրամ հատկացումը պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով բաշխել Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի
փետրվարի__-ի N _____Ն որոշման

Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին հատկացվող գումարի բաշխումը՝ ըստ էթնիկ համայնքների

N	էթնիկ համայնքը	Կազմակերպության անվանունը	Բանկի անվանումը և հաշվեհամարը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
1.1	Ասորական	Հայաստանի «Աթուռ» ասորիների ասոցիացիա	«Հայէկոնոմբանկ» 163048120741	409,000
1.2		«Ասորական«Աշուր» երիտասարդական կենտրոն» ՀԿ	«Յունիբանկ» 24124000620500	409,000
2	Բելառուսական	Հայաստանի «Երևանի բելառուսների համայնք «Բելառուս»» ՀԿ	«Արդշինինվեստբանկ» 247010017991	818,000
3	Գերմանական	«Տեվտոնիա» գերմանացիների մշակութային հասարակական կազմակերպություն	«Կոնվերսբանկ» 1930026634280100	818,000
4.1	Եզդիական	«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Արդշինինվեստբանկ» 2470100046920000	409.000
4.2		«եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Հայէկոնոմբանկ» Արաբկիրի մասնաճյուղ 163058701547	4
5	Լեհական	Լեհերի համագործակցության «Պոլոնիա» բարեգործական ՀԿ	«HSBC» 001-133255-001	818,000
6	Հունական	«Հունական հասարակական կազմակերպությունների միություն»	«Հայէկոնոմբանկ» Թումանյանի մասնա-ճյուղ 163188103481	818,000
7	Հրեական	«Հայաստանի հրեական համայնք» ՀԿ	«Յունիբանկ» 24100100675800	818,000
8	Ռուսական	«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն ՀԿ	«Անելիք Բանկ» ՓԲԸ 118001010875	818,000
9	Վրացական	«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական ՀԿ	«Հայէկոնոմբանկ» 163008136661	818,000

10	Ուկրաինական	««Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Ամերիաբանկ» 1570001167470300	818,000
11	Քրդական	«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Անելիք Բանկ» ՓԲԸ Աբովյանի մասնաճյուղ 118031024318	818,000
12	Ընդհանուր ծախսեր	Համակարգող խորհուրդ, «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ՝ Խորհրդի միասնական կրթամշակութային միջոցառումների համար	«Անելիք Բանկ» ՓԲԸ 118001010875	1,002,000
13	Ծրագրերի ֆինանսավորում	Համակարգող խորհուրդ ««Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ՝ Խորհրդի որոշմամբ հաստատվող ազգային փոքրամասնությունների տարբեր հասարակական կազմակեր-պությունների (այդ թվում՝ Խորհրդի անդամ չհանդիսացողների) առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման համար	«Անելիք Բանկ» ՓԲԸ 118001010875	10,000,000
	Ընդհանուր գումարը			20,000,000

Հավելված 2

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

"Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին" Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Նախագիծը ներկայացվում է ի կատարումն ՀՀ կառավարության "ՀՀ 2015թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, ՀՀ 2015թ. պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին" ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման 28-րդ կետի:

2. Կարգավորման առարկան

Հիմք ընդունելով վերը նշվածը, ներկայացվող նախագծով սահմանվում է նշյալ գումարի բաշխումը: Ըստ այդմ նախատեսվում է, որ

ա/ այդ գումարից ինը մլն ՀՀ դրամը հավասարապես (818 000 դրամ) բաշխվում է ըստ ՀՀ Նախագահի օգնականին կից գործող ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի անդամ հանդիսացող 11 համայնքների միջև: Այն դեպքում, երբ համայնքը ներկայանում է հասարակական երկու կազմակերպությամբ, տվյալ գումարը կիսվում է նրանց միջև (յուրաքանչյուրին՝ 409 000 դրամ),

բ/ իսկ տասնմեկ մլն. ՀՀ դրամը փոխանցվում է Խորհրդի անդամ հանդիսացող «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ հաշվեհամարին, որից մեկ մլն. ՀՀ դրամը Խորհրդի միասնական կրթամշակութային միջոցառումների, իսկ տասը մլն. ՀՀ դրամը՝ Խորհրդի հետագա որոշումների հիման վրա հաստատվող ազգային փոքրամասնությունների տարբեր հասարակական կազմակերպությունների (այդ թվում՝ Խորհրդի անդամ չհանդիսացողների) կողմից էթնիկ համայնքների կրթամշակութային զարգացմանը միտված առավել կարևոր նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման նպատակով: Գումարը սույն հասարակական կազմակերպությանը փոխանցելու որոշումը կայացնում է Համակարգող խորհուրդը: Նախկինում՝ մինչև 2013 թվականը ներառյալ այդ գումարը տարիներ շարունակ փոխանցվել է «Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը:

Նշյալ հասարակական կազմակերպություններն ստացված գումարը ծախսում են իրականացնելու համար հետևյալ բնույթի միջոցառումներ կազմակերպելու նպատակով՝ **կրթական** (կիրակնօրյա դպրոցներ, դասընթացներ, գրականության, մամուլի և դիտակտիկ ու լսողական նյութերի գնում, ուսման վարձեր, լեզվի ուսուցիչների խրախուսում, մրցույթներ), **մշակութային** (համերգներ, փառատոններ, ցուցահանդեսներ, գրական երեկույթ, այցելություններ դեպի հուշաձաններ, այցելություններ տարբեր մարզեր, այլ միջոցառումներ), **տոնախմբություններ** (ազգային և պետական տոների և հիշատակի օրերի նշում, զանազան նվերներ, համերգ), **տարաբնույթ քննարկումներ** (սեմինարներ, երկխոսություններ, ճամբար, զբոսաշրջություն), **գրասենյակային ծախսեր** (գրենական պիտույքներ, ինտերնետ և հեռախոսային կապ, կայքէջ, գրասենյակային տարածքի վարձավճար, աջակցություն մասնաճյուղերին) և այլ:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտն ընդունվում է յուրաքանչյուր տարի, որի արդյունքում ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները ստացված գումարներն օգտագործում են ազգային ինքնության պաշտպանությանն ուղղված կազմակերպական, կրթական ու մշակութային խնդիրների լուծման նպատակով և տարեվերջին հաշվետվություն են ներկայացնում իրականացված աշխատանքների մասին:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար–նախարար
Դավիթ Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

“Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

“Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Դավիթ Հարությունյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

“Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման առնչությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

“Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով ազգային փոքրամասնություններին պետական աջակցության նպատակով նախատեսված հատկացումները բաշխելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծն ընդունելու դեպքում 2015 թվականի ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման անհրաժեշտություն չի առաջանում:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Դավիթ Հարությունյան

Հավելված 3

N	էթնիկ համայնքը	էթնիկ համայնքի կազմը ըստ 2011թ. մարդահամարի տվյալների http://armstat.am/file/doc/99478353.pdf	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)
1.1	Ասորական	2 769 անձ	409,000
4.1	Եզդիական	35 308 անձ	409.000
6	Հունական	900 անձ	818,000
8	Ռուսական	11 911 անձ	818,000
9	Վրացական	617 անձ	818,000
10	Ուկրաինական	1 176 անձ	818,000
11	Քրդական	2 162 անձ	818,000
12	Ընդհանուր ծախսեր		1,002,000
13	Ծրագրերի ֆինանսավորում		10,000,000
	Ընդհանուր գումարը		20,000,000